

յարաբերութիւններէն և հոն զրկած Դոմինիկեան կարգէն թովմաս երանելին, որպէսզի կաթողիկոսութիւն քարոզէ: Եթովպիոյ կայսրը սակայն մերժած էր ընդունիլ այդ կրօնաւորը և իր երկրին սահմաններէն վտարած զայն (Յ. Նալբանդեան. Արեւ. 16 Փետր. 1935): Սակայն ասով չփակուեցաւ Հոռոմի գործունէութիւնը Հապէշիստանի մէջ, ժամանակ երբ այս երկիրը քաղաքական գետնի վրայ յարաբերութեան մտաւելորդայի հետ, քաղաքական գործակալներու ետին գրտաւ հաւատածաւալ քարոզիչներ:

Առաջին անգամ Փորթուկալցիք, Հնդկաստան երթեւեկի ճամբայ ճր փնտռելու տանն Հապէշիստանի հետ յարաբերութեան մէջ մտած էին Վորթուկալի Յովհաննէս Բ. թագաւորը (1481 — 1495) Բիլէս Գորվիհամ անունով մէկը զրկեց 1490ին Հապէշիստան(1):

Այդ թուականէն յետոյ է, որ Փորթուկալ և անոր միջնորդութեամբ նսւե եւրոպական քրիստոնեայ պետութիւններ Հապէշիստանի հետ յարաբերութիւն հաստատեցին:

Շաները փոխադարձ էին: Փորթուկալի հնդկական ստացուածքներուն համար զօրաւոր յենարան մը կրնար ըլլալ Եթովպիա: Փոխադարձաբար՝ Փորթու-

(1) Ազոնց արքայ իր Աւխարհայրաւթեան մէջ (Ափրեկէ, էջ 536) կը գրէ, թէ Փորթուկալի Յովհաննէս Բ. թագաւորը 1477ին Հապէշիստան զրկած է Պետրոս Կովիլանիոս Փորթուկալցին, ընկերակցութեամբ Ալբան Փայվայի և երկու նրեաներու, ծախսութիւններ առնելու համար այս երկրին և անոր առասպելական «Յովանի երէց» քահանայ-կայսէր վրայ:

Ասոնք երբ Հապէշիստան գացին, տեսնու որ իմբնակալը Բիւսնիայ է և անոր մասին եւրոպա հասած զօրոյցները նմարիտ էին: Աւսի՝ զրեղին Փորթուկալ, թէ զսամ էին «Յովհան երէցը» և տոյ միայն Բ. Արիկէ, այլ և իմաստուն հաւատացիներ, ինչ որ սուտ էր, ինչպէս կը բացատրէ Ազոնց արքան իր զործին մէջ (էջ 537):